ԱՒԵՏԻՔ (ՄՀՏ.) ՍԱՄՆՑԻ.—Լս. Ս. Աստուածածնի, 1653ին Ս. Յակոբի Մատենադարանին կը նուիրէ Զեռ. Աւետարան մը սա յիշատակարանով, «...յամի թուականութեանս մերոյ սեռի ՌՃԲ (=1653) կատարեցաւ սբ. Աւետարանս...: Արդ յիշեցէք ի Քս. Ած. զմահտեսի լուսարար Աւետիքն, որ ցանկացող եղև այսմ աստուածախօս մատենիս և լուսազարդ սբ. աւետարանիս, և ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց, և ետ զարդարել ի ներքոյ և արտաքոյ ոսկով և արծաթով, և ետ յիշատակ ի Ս. Երուսաղէմ և ի գուռն սրբոյն Յակոբայ Տեառնեղբօրն և Յակոբայ որդւոյն Զեբեթիա գլխադիր սբ. դամբարանին: Արդ՝ յերեսս անկեալ մոխրամած դիմօք աղաչեմ մանկունդ սբ. եկեղեցւոյ... յիշեցէք ի մաքուր յաղօթս ձեր զսանցի մահտասի Աւետիքն, զլուսարար սբ. Աստուածածնին, և զսրբոյն Յակոբայ և այլ ամենայն սբ. տնօրինականացն Քսի. Նա՛, և զծնողս իւր, զհայրն Դանիէլ և զմայրն Մանուշակ և զհօրեղբայրն զՄկրտիչն, եւ զայլ ամ...ամէն»: (ՄՁ. թ. 44, Խապ. Յուց. տետր է. էջ 309-310):

ԱՒԵՏԻՔ ՎՐԴ. ԵՒԴՈԿԻԱՅԻ.—Մբ. Ս. Կարապետի, Առ. Կեսարիոյ 1834ին, և Նւ. Երուսաղէմի, ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը 1744ին. կը վախճանի (1744): Ս. Յակոբի նուիրած իր յիշատակի մասին (ՄՁ. թ. 532):

ԱՒԵՏԻՔ ՎՐԴ. ՄԱՐԱՇՅԻ, Մբ.—Զռ. 1835ին, կ'այրիանայ. այցելութեամբ Ս. Յակոբ կուգայ և վեղար կ'ստանայ, մարգարտեայ թագ մը յիշատակ տուած է Ս. Յակոբի. 1841ին ալ Ս. Յակոբի տպարանին մէջ իր ծախքով տպագրել տուած է Ս. Պատարագի խորհրդաstեսրն որուն յիշատակարանին մէջ, Աւետիք վրդ. կը կոչուի աւագ խոստովանահայր և ծերունազարդ, վախճանած է 1843ին:

ԱՒԵՏԻՍ ՎՐԴ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ, ՄՇԵՑԻ. (ԽԱՍ ԳԻՒՂԷՆ), Մբ.—Ծ. 1842ին, Զռ. ի Լիմ, 1870ին. կ'այցելէ Ս. Յակոբի վանքը 1883ին, կը միաբանակցի 1886ին, ժամարար ի Յոպպէ 1898-1908, խոստ. կանանց և ժամօրհնող (1908-1913), կը վախճանի 1913ին: Իր հրատարակութիւններն են, Քրիստոսի չարչարանաց վրայ խորհրդածութիւններ. (բ. տպ. 1906) Երկու ոտիներ, մարմին եւ հոգին իրարու դէմ. (բ. տպ. 1911) Բանիւ խրատական Մարկոս